ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

հունվարի 2024 թվականի № - Ա

«ԼՈՒՍԱԿԵՐՏ ԲԻՈԳԱԶ ՓԼԱՆԹ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի սեպտեմբերի 6-ի №317-Ա որոշմամբ «ԼՈՒՍԱԿԵՐՏ ԲԻՈԳԱԶ ՓԼԱՆԹ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) տուգանվել է 1 (մեկ) միլիոն դրամ գումարի չափով՝ Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի №308Ն որոշմամբ սահմանված ժամկետի խախտման համար,

բ. Ընկերությունը 2023 թվականի հոկտեմբերի 17-ին վարչական բողոք է ներկայացրել Հանձնաժողով՝ խնդրելով վերացնել Հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 6-ի №317-Ա որոշումը (այսուհետ՝ Որոշում)՝ համարելով, որ Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի №308-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջը կիրառելի է միայն այն դեպքերի համար, երբ առկա է էլեկտրական էներգիա արտադրած լինելու փաստը և տվյալ դեպքում այդ պահանջը կիրառելի չէ Ընկերության նկատմամբ, քանի որ Ընկերությունը վերագրվող ժամանակահատվածում էլեկտրական էներգիա որևէ ձևով չի արտադրել,

գ. 2023 թվականի հոկտեմբերի 20-ին հարուցվել է Որոշման վերաբերյալ բողոքի քննարկման վարչական վարույթ, ինչի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի №ԳԲ/34.3-Մ2-3/3981-2023 գրությամբ,

դ. Հանձնաժողովը 2023 թվականի սեպտեմբերի 18-ի №ԳԲ/34.3-Մ2-3/3552-2023 և նույն թվականի նոյեմբերի 14-ի №ԳԲ/34.3-Մ2-3/4360-2023 գրություններով դիմել է

Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը՝ խնդրելով ապահովել Որոշման 2-րդ կետի համապատասխանաբար 1-ին և 2-րդ ենթակետերի հարկադիր կատարումը, այն է՝ պարտավորեցնել Ընկերությանը Հանձնաժողով ներկայացնել Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի №308-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) N2 հավելվածի N2-2 ձևով սահմանված 2023 թվականի 1-ին կիսամյակի համար տեղեկատվությունը (այսուհետ՝ Տեղեկատվություն) և մեկամսյա ժամկետում 1 (մեկ) միլիոն դրամ գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

ե. ի պատասխան Հանձնաժողովի հիշյալ գրությունների՝ 2023 թվականի սեպտեմբերի 25-ին ստացվել է Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության Կոտայքի մարզային բաժնի Եղվարդի տարածաշրջանի բաժանմունքի ավագ հարկադիր կատարող արդարադատության մայոր Գեղամ Վարդանյանի 2023 թվականի սեպտեմբերի 20-ի կատարողական վարույթ հարուցելու մասին որոշումը, որով հարուցվել է թիվ 11144159 կատարողական վարույթը և Ընկերությանը պարտավորեցվել է մեկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել Տեղեկատվությունը և այլ անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը: Ապա, 2023 թվականի նոյեմբերի 22-ին ստացվել է Հայաստանի Հանրապետության հարկադիր կատարումն ապահովող ծառայության Կոտայքի մարզային բաժնի Եղվարդի տարածաշրջանի բաժանմունքի ավագ հարկադիր կատարող Գեղամ Վարդանյանի 2023 թվականի նոյեմբերի 17-ի կատարողական վարույթ հարուցելու, գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու և արգելանք դնելու մասին որոշումը, որով հարուցվել է թիվ 11421699 կատարողական վարույթը, և ի թիվս այլնի, որոշվել է Ընկերությունից Հանձնաժողովի օգտին բռնագանձել 1 (մեկ) միլիոն դրամ,

զ. Ընկերությունը Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացրել 2023 թվականի հոկտեմբերի 17-ին,

է. իրականացված վարույթի շրջանակում հաստատված է համարվել, որ՝

1) Որոշման իրավաչափությունը բխում է հետևյալ իրավանորմերից.

- «Էներգետիկայի մասին» օրենքի 29-րդ հոդված, որի համաձայն՝ լիցենզավորված անձը լիցենզավորված գործունեությանը վերաբերող հաշվետվությունները, այլ տեղեկատվությունը և անհրաժեշտ հիմնավորող

փաստաթղթերը ներկայացնում է Հանձնաժողով՝ վերջինիս կողմից սահմանված ձևերով և կարգով:

- Հանձնաժողովի 2008 թվականի սեպտեմբերի 10-ի №493Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրած էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0297 լիցենզիայի պայմանների 20-րդ կետ, որի համաձայն՝ լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգերին և ձևերին համապատասխան լիցենզավորված գործունեության մասին տեղեկատվություն և հաշվետվություններ ներկայացնել Հանձնաժողով:
- Կարգի 1-ին կետ, որի համաձայն՝ էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձինք լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվությունը Հանձնաժողով են ներկայացնում Կարգի N1 հավելվածով սահմանված լիցենզավորված անձանց կողմից հանձնաժողով ներկայացվող տեղեկատվության ցանկի և N2 հավելվածով սահմանված N 2-1, N 2-2, N 2-3, N 2-4, N 2-5, N 2-6, N 2-7, N 2-8, N 2-9, N 2-10, N 2-11, N 2-12, N 2-13, N 2-14, N 2-15, N 2-16, N 2-17, N 2-18, N 2-19 և N 2-20 ձևերի համաձայն,
- Կարգի 2-րդ կետի 3-րդ ենթակետ, որի համաձայն՝ լիցենզավորված անձինք ներկայացնում են Կարգի N2 հավելվածի №2-2 ձևով սահմանված Տեղեկատվությունը՝ կիսամյակային կտրվածքով՝ մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 25-ը,
- «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետ, որի համաձայն՝ Հանձնաժողովն իրավասու է իր սահմանած կարգով էներգետիկայի բնագավառում իրականացնելու լիցենզավորում՝ տրամադրելու լիցենզիաներ, երկարաձգելու դրանց գործողության ժամկետները, վերաձևակերպելու, կասեցնելու և դադարեցնելու դրանց գործողությունը, ինչպես նաև սահմանելու լիցենզիաների պայմանները, վերահսկելու դրանց կատարումը և կիրառելու նույն օրենքով սահմանված պատասխանատվության միջոցները.

2) Վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Որոշումն ընդունվել է գործող իրավակարգավորումներին համապատասխան, ուստի դրա վերանայման հիմքերը բացակայում են: Մասնավորապես, Որոշումը կայացվել է Ընկերության կողմից

Կարգի 2-րդ կետի պահանջի խախտման՝ Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում Կարգի N2 հավելվածի №2-2 ձևով սահմանված Տեղեկատվությունը չներկայացնելու հիմքով: Հիշյալ իրավակարգավորման համաձայն՝ Ընկերության կողմից Տեղեկատվությունը ենթակա է ներկայացման՝ մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 25-ը: Ընդ որում, Ընկերությունը նույն հիմքով տուգանվել է նաև 2022 թվականի նոյեմբերի 16-ի №488-Ա որոշմամբ՝ կրկին Տեղեկատվության ներկայացման ժամկետի խախտման համար: Միաժամանակ, հաշվետու ժամանակահատվածում էլեկտրական էներգիա արտադրած չլինելու վերաբերյալ Ընկերության կողմից ներկայացված փաստարկն անհիմն է և որևէ կերպ չի կարող դիտվել որպես Որոշումը վերացնելու օբյեկտիվ պատճառ, քանի որ, Կարգի համաձայն, էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ունեցող անձը էլեկտրական էներգիայի արտադրության փուլում պարտավոր էր ներկայացնել Տեղեկատվությունը՝ անկախ հաշվետու ժամանակահատվածում էլեկտրական էներգիա արտադրած լինելու հանգամանքից: Ուստի, Որոշման փոփոխման կամ բեկանման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 77-րդ հոդվածով սահմանված հիմքերը բացակայում են, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Մերժել Հանձնաժողովի Որոշումը վերացնելու վերաբերյալ Ընկերության 2023 թվականի հոկտեմբերի 17-ի վարչական բողոքը:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
հունվարի 2024թ.